

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՄԱԿ


Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետը, ի դեմս Պարարվեստի մանկավարժության ամբիոնի վարիչ Կարեն Գետրոցյանի՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դեկան Գետրոգ Թադեոսյանի անունից՝ վերջինիս կողմից սույնի ստորագրման նպատակով տրված լիազորության հիման վրա, իրավաբանական հասցեն՝ Տիգրան Մեծի փողոց թիվ 17, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, այսուհետ՝ «Կուլտուրա-ՀՊՄՀ» եւ Արվեստների պետական համալսարանի Ժողովրդական արվեստների ֆակուլտետը, ի դեմս դեկան-տնօրեն Վիկտոր Խուան Զիուստոյի, իրավաբանական հասցեն՝ Սանչես դե Լորիա փողոց թիվ 443, Բուենոս Այրեսի ինքնավար քաղաք, Արգենտինական Հանրապետություն, այսուհետ՝ «ԺԱՖ-ԱԱՀ», փոխադարձ համաձայնությամբ կնքում են սույն մտադրությունների նամակը՝ հետեւյալ հիմքերով եւ նպատակներով.

1. Երկու կողմերն ընդունում են համատեղ հետաքրքրության բոլոր ոլորտներում եւ դիսցիպլինաներում մշակութային, գիտական եւ կրթական կապեր հաստատելու կարելիությունը եւ օգտակարությունը՝ նպատակ ունենալով հաստատել եւ ամրապնդել բարեկամական կապեր երկու հաստատությունների միջեւ հետագայում ակադեմիական համագործակցության մասին շրջանակային համագործակցության համաձայնագրի կնքման միջոցով:
2. Որպեսզի մոտ ապագայում, հատուկ համաձայնագրերի կնքման միջոցով, հնարավոր լինի իրականացնել համատեղ միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝
 - Համատեղ հետազոտական ծրագրեր եւ համատեղ գիտական նախաձեռնություններ, այդ թվում՝ սեմինարներ, խորհրդաժողովներ եւ այլն,
 - Ակադեմիական եւ վարչական անձնակազմի փոխադարձ փոխանակում,
 - Հրապարակումների, հաշվետվությունների եւ այլ ակադեմիական տեղեկատվության փոխանակում,
 - Ուսանողների փոխանակում,
 - Միմյանց հետազոտական թիմերի օգտագործում եւ ազատ մուտք միմյանց շինություններ,
 - Համատեղ ակադեմիական ծրագրեր (օրինակ՝ կրկնակի վկայականի ծրագրեր),
 - Արտասահմանում կարճատեւ ուսման ծրագրեր ուսանողների համար,
 - Փոխադարձ համաձայնությամբ այլ միջոցառումներ:

Երկու կողմերը հանձնառություն են ստանձնում ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր երկու հաստատությունների միջեւ շրջանակային համաձայնագիր ստորագրելու ուղղությամբ՝ երկու կողմերի ղեկավարների ստորագրությամբ եւ այսուհետ հատուկ համաձայնագրերի կնքման ուղղությամբ՝ նպատակ ունենալով իրականացնել այն միջոցառումները, որոնց վերաբերյալ ձեռք կբերվի փոխադարձ համաձայնություն:


Ի վկայություն վերոգրյալի, ստորագրվում է երկու հավասարազոր օրինակ՝ յուրաքանչյուրը՝ հայերեն և իսպաներեն լեզուներով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար, քաղաք Բուենոս Այրեսում 2022թ. ապրիլի 13-ին:

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական համալսարանի
Կուլտուրայի ֆակուլտետի կողմից՝



Պարարվեստի մանկավարժության
ամբիոնի վարիչ
Կարեն Գետրոյան

Արվեստների պետական համալսարանի
Ժողովրդական արվեստների
ֆակուլտետի կողմից՝



Դեկան-տնօրեն
Վիկտոր Խուան Զիռասո